ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 121

ք. Մարալիկ 31 օգոստոսի 2012 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՍՈԽԱԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Բարեկամության փողոցի N 4 հասցեի տան բնակիչ Աշոտ Սոխակի Հայրապետյանի 21 օգոստոսի 2012 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բարեկամության N 4 հասցեում լատիշ շինարարների կողմից 1989 թվականին կառուցվել է բնակելի տուն և ամառային խոհանոց և նախկին Անիի շրջխորհրդի գործկոմի կողմից 13 փետրվարի 1991 թվականի N 2 արձանագրությամբ հատկացվել է Աշոտ Սոխակի Հայրապետյանի ընտանիքին (բաղկացած 6 անձից), սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել և միաժամանակ օրինական հատկացված 0.06 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.039439 հա հողամաս, ուստի ղեկավարվելով □Տեղական ինքնակառավարման մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, □Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների կարգավիճակի մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Աշոտ Սոխակի Հայրապետյանին, Յուղաբեր Աշոտի Սարգսյանին, Հասմիկ Աշոտի Հայրապետյանին, Վեներա Աշոտի Հայրապետյանին, Արտուշ Աշոտի Հայրապետյանին, Հրաչ Աշոտի Հայրապետյանին Անիի շրջխորհրդի գործկոմի կողմից 13 փետրվարի 1991 թվականի N 2 արձանագրությամբ հատկացված բնակելի տան և ամառային խոհանոցի, ինչպես նաև օրինական հատկացված 0.06 հա հողամասի, □իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահված անհատական բնակելի տների կարգավիճակին վերաբերյալ□ Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 0.0300 հա անհատույց հատկացված հողամասի, իսկ մնացած 0.009439 հա հողամասի հետ կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր, մուծելով գումար՝ տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի չափով , գույքային իրավունքները վերականգնել և ճանաչելով նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ